ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 23 » դեկտեմբեր 2024 թվականի №537

ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3,33,34 և 35-րդ կետերի Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, « Քաղաքաշինության մասին » օրենքի 143-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 1-ին մասի պահանջներին, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 53-րդ կետերի, Արզնի համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 64-Ն որոշումն և հիմք ընդունելով « ԳԵՈԼԵՆԴ » ՍՊԸ- ի կողմից 12.08.2022 թվականի թիվ 31082022-07-0054 սեփականության վկայականում հաշվառված ինքնակամ շինությունները և հաշվի առնելով Մանվել Եփրեմի Եփրեմյանի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող Արզնի համայնքի վարչական տարածքում գտնվող 07-016-0226-0004 կադաստրային ծածկագրով 0.15521 հա մակերեսով հողամասը սեփականության իրավունքի 12.08.2022 թվականի թիվ 31082022-07-0054 վկայականի տվյալների համաձայն հանդիսանում է

գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք հողամաս , համաձայն տարածական պլանավորման փաստաթղթերի ,փոխադրել բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. ՀՀ Կոտայքի մարզի, Արզնի համայնքի , Երևան -Սևան մայրուղի 16-17 կմ 1/1 հասցեում գտնվող, 07-016-0226-0004 կադաստրային ծածկագրով 0.15521 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասում առկա ինքնակամ կառուցված ՝ առևտրի սրահ - 483.42 քմ արտաքին մակերեսով , օպերատորի սենյակ – 34.50 քմ արտաքին մակերեսով , ծածկ – 29.42 քմ արտաքին մակերեսով , և 35.50 քմ մակերեսով ճանաչել օրինական:

4. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ**